| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                            |                                              | <b>13</b>             |                                                                                                                    |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                            |                                              | <b>39</b>             |                                                                                                                    |

ՏՆՕՐԵՆ



Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, [www.qajaran@mail.am](mailto:www.qajaran@mail.am)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 67-Ա

21 դեկտեմբերի 2018թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ  
ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 28-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» և «Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով հաշվարկված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափը, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ավագանին **որոշում է.**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի ղեկավարի վարձատրության չափը՝ ամսական 440 000 (չորս հարյուր քառասուն հազար) դրամ

Առաքելյան Սասուն  կողմ


Իսրաելյան Գարիկ  կողմ


Աթայան Մերուժան  կողմ

Պետրոսյան Հովհաննես  կողմ

Գևորգյան Մարինա  կողմ


Մակիյան Կարինե  կողմ

Հակոբյան Արմեն  կողմ

Ստեփանյան Դերենիկ  կողմ

Սաղաթելյան Էրիկ  կողմ

Անդրեասյան Արմեն  կողմ

Համբարձումյան Կարեն  կողմ

Համայնքի ղեկավար

Մ Փարամազյան

2018թ դեկտեմբերի 24 Քաջարան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, [www.qajaran@mail.am](mailto:www.qajaran@mail.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 68-Ա**  
21 դեկտեմբերի 2018թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆԻ  
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ  
ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ  
ԿԱՐԳԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասի բ) կետով, և նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկը, համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և չափերը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Հաստատել համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար սահմանվող հավելավճարի կիրառման կարգը և դրանց չափերը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 1-ից:

Առաքելյան Սասուն  կողմ

Աթայան Մերուժան-  կողմ

Իսրաելյան Գարիկ-  կողմ

Պետրոսյան Հովհաննես  կողմ

Գևորգյան Մարինա *M. M.* կողմ

Հակոբյան Արմեն - *A. H.* կողմ

Սաղաթեյան Էրիկ - *E. S.* կողմ


Համբարձումյան Կարեն - կողմ

Մակիյան Կարինե - *K. M.* կողմ

Ստեփանյան Դերենիկ - *D. S.* կողմ

Անդրեասյան Արմեն - *A. A.* կողմ

Համայնքի ղեկավար



*A. A.*

Մ Փարամազյան

2018թ դեկտեմբերի 24, Քաջարան

## Կ Ա Ր Գ

**Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրա չափը**

1. Սույն կարգով սահմանվում է Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար աշխատանքի վարձատրության պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և դրա չափը:
2. Հավելավճարը սահմանվում է այն համայնքային ծառայողների համար, ովքեր «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճաններ և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ասվա մեկից:
3. Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում 5%-ի չափով՝ ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ



2. Առաքելյան

Կ Ա Ր Գ


**Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանված հավելավճարի կիրառման և դրանց չափերը**

1. Սույն կարգով սահմանվում է համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների՝ առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ հավելավճարի կիրառման կարգը և չափերը:
2. Աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է այն համայնքային ծառայողներին, որոնց աշխատանքային ստաժում ընդգրկվում է այն աշխատանքը կամ ծառայությունը, որի համար անձը կրել է Քաջարանի համայնքապետարանի աշխատակազմում շնորհված դասային աստիճաններ:
3. Երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացմամբ 5-ից 10 տարի աշխատանքային ստաժի դեպքում 5%-ի չափով, 10-ից ավել տարիներին՝ 10%-ի չափով և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժի լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
4. Համայնքապետարանի աշխատակազմում ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:



ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԲԱՐՏՈՒՂԱՐ

2. Առաքելյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ  
ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնք  
ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Քաջարան, 0285-3-21-81, [www.qajaran@mail.am](mailto:www.qajaran@mail.am)

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 69-Ն**  
21 դեկտեմբերի 2018թվականի

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ ՏԵՂԱԿԱՆ ՅՈՒՐՔԵՐԸ, ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն „ Տեղական ինքնակառավարման մասին„ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 19-րդ կետի „ Տեղական տուրքերի և վճարների մասին„ ՀՀ օրենքի 7,8,10,11 հոդվածների, համայնքի ավագանին, **ՈՐՈՇՈՒՄ Է.-**

1,Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքի տարածքում 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը՝ համաձայն հավելվածների:/1,2,3,4,5,/  
2 Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը

Առաքելյան Սասուն  կողմ

Աթայան Մերթուհան  կողմ

Գևորգյան Մարինա  կողմ

Հակոբյան Արմեն  կողմ

Սաղաթելյան Էրիկ  կողմ


Համբարձումյան Կարեն  կողմ

Իսրաելյան Գարիկ  կողմ

Պետրոսյան Հովհաննես  կողմ

Մակիյան Կարինե  կողմ

Ստեփանյան Դերենիկ  կողմ

Անդրեասյան Արմեն  կողմ

Հասարակական կազմակերպություն



Մ Փարամազյան

2018թ դեկտեմբերի 24 Քաջարան



## Ց Ա Ն Կ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՏԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Քաջարան համայնքում սահմանվում են հետևյալ գոտիավորումները՝

- 1) 1-ին գոտին ընդգրկում է Քաջարան քաղաքը և համայնքի վարչական տարածքի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզերքը:
- 2) 2-րդ գոտին ընդգրկում է Լեռնաձոր, Անդրկավան, Բաբիկավան, Կաթնառատ, Կավճուտ, Ձազիկավան, Փուխրուտ, Աջաբաջ, Գետիշեն, Կարդ, Ներքին Գիրաթաղ, Նոր Աստղաբերդ, Ոչեթի, Գեղավանք, Կիցք, Վերին Գիրաթաղ, Վերին Գեղավանք, Քարուտ, Քաջարանց բնակավայրերը:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ

## 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության համայնքներում սահմանվում են տեղական տուրքերի հետևյալ դրույքաչափերը՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների /բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

3) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար.

4) Համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար.

5) Համայնքի վարչական տարածքում գտնվող՝ համայնք սեփականությունը հանդիսացող միջոցառումների սրահների օրավարձը թաղման ծիսակատարությունների և այլ միջոցառումների համար.

6) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրալեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար.

7) Համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վալյում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար.

8) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար.

9) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար.

10) Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին /սաունաներին/, ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար.

11) Համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար.

12) Քաղաքային բնակավայրերում ավագանու որոշմամբ սահմանված տնային կենդանիներ պահելու թույլտվության համար.

13) Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշները /զինանշան, անվանում և այլն/ որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար.

15) Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար.

16) Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի /հրաժեշտի/ ծիսակատարության ծառայությունների իրականացման և /կամ/ մատուցման թույլտվության համար.

17) Համայնքի վարչական տարածքում գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՔԱԶԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ՎԱԿԱՆԻ  
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ

| Տեղական տուրքերի տեսակները |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      | Տեղական տուրքերի դրույքաչափերը ըստ գոտիավորման /ՀՀ դրամ/ |                                |
|----------------------------|----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|--------------------------------|
|                            |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                      | 1-ին գոտի                                                | 2-րդ գոտի                      |
| 1                          | 2                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 3                                                        | 4                              |
| 1)                         | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման)(բացառությամբ Հայաստանի հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար. |                                                          |                                |
| ա.                         | հիմնական շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                                                                              |                                                          |                                |
|                            | մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար.                                                                                                              | 15.000<br>/տասնհինգ հազար/                               | 15.000<br>/տասնհինգ հազար/     |
| բ.                         | տույն կետի <<ա>> ենթակետով ճանաչատված շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                                                 |                                                          |                                |
| -                          | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                             | 30.000<br>/երեսուն հազար/                                | 30.000<br>/երեսուն հազար/      |
| -                          | 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                            | 50.000<br>/հիսուն հազար/                                 | 50.000<br>/հիսուն հազար/       |
| -                          | 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                           | 50.000<br>/հիսուն հազար/                                 | 50.000<br>/հիսուն հազար/       |
|                            | 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար                                                                                                                                                                                                                                                                              | 100.000<br>/մեկ հարյուր հազար/                           | 100.000<br>/մեկ հարյուր հազար/ |

|    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                       |                       |  |
|----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|-----------------------|--|
| գ. | ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  |                       |                       |  |
| -  | մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                            | 3.000<br>/երեք հազար/ | 3.000<br>/երեք հազար/ |  |
| -  | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                          | 5.000<br>/հինգ հազար/ | 5.000<br>/հինգ հազար/ |  |
| 2) | համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝                                                                                                                                                                                                                                                              |                       |                       |  |
| ա. | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                  | 3.000<br>/երեք հազար/ | 3.000<br>/երեք հազար/ |  |
| բ. | բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով, |                       |                       |  |
| գ. | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.                                                                                                                                                                                                                                     |                       |                       |  |

|    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                |  |                                  |
|----|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------|--|----------------------------------|
|    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |                                                                |  |                                  |
| 3) | համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար՝                                                                                                                                                                                         | 5.000<br>/հինգ հազար/                                          |  | 5.000<br>/հինգ հազար/            |
| 4) | համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                                                                                                                                                                                                                                                                 | 200.000<br>/երկու հարյուր հազար/                               |  | 200.000<br>/երկու հարյուր հազար/ |
| 5) | Համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող միջոցառումների սրահների օրավարձը թաղման ծիսակատարությունների և այլ միջոցառումների համար սահմանել.                                                                                                                                                                                                                                          |                                                                |  |                                  |
|    | 1.Բակունցի 5ա հասցեում գտնվող «Լեռնագործների արարողատուն» ՍՊԸ                                                                                                                                                                                                                                                                                                                                                     | 40.000<br>/քառասուն հազար/<br>այլ<br>50.000<br>/հիսուն հազար/  |  |                                  |
|    | 2.Գալի 2 հասցեում                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                 | 30.000<br>/երեսուն հազար/<br>այլ<br>40.000<br>/քառասուն հազար/ |  |                                  |
|    | 3.Տերյան փողոց                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                    | 40.000<br>/քառասուն հազար/<br>այլ<br>50.000<br>/հիսուն հազար/  |  |                                  |
| 6) | Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ | 20.000<br>/քսան հազար/                                         |  | 20.000<br>/քսան հազար/           |
| 7) | համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու                                                                                                                                                                                                                                                                                            | 50.000<br>/հիսուն հազար/                                       |  | 50.000<br>/հիսուն հազար/         |

|    |                                                                                                                                       |                               |  |                                         |
|----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------|--|-----------------------------------------|
|    |                                                                                                                                       |                               |  |                                         |
| 8) | համայնքի վարչական տարածքում ոգելից և ավկոհուլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար                    |                               |  |                                         |
| ա. | ոգելից և ավկոհուլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար                                               |                               |  |                                         |
| -  | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝         | 8.000<br>/ութ հազար/          |  | 4.000<br>/չորս հազար/                   |
| -  | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝   | 12.000<br>/տասներկու հազար/   |  | 10.500<br>/տասը հազար հինգ հարյուր/     |
| -  | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝  | 16.000<br>/տասնվեց հազար/     |  | 13.500<br>/տասերեք հազար/               |
| -  | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 22.000<br>/քսաներկու հազար/   |  | 20.500<br>/քսան հազար հինգ հարյուր/     |
| -  | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ | 35.000<br>/երեսունհինգ հազար/ |  | 25.500<br>/քսանհինգ հազար հինգ հարյուր/ |
| -  | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝      | 70.000<br>/յոթանասուն հազար/  |  | 45.500<br>/քառասունհինգ հազար /         |
| բ. | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար                                                         |                               |  |                                         |
| -  | մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝         | 8.000<br>/ութ հազար/          |  | 4.000<br>/չորս հազար/                   |
| -  | 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝   | 12.000<br>/տասներկու հազար/   |  | 10.500<br>/տասը հազար հինգ հարյուր/     |
| -  | 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝  | 16.000<br>/տասնվեց հազար/     |  | 13.500<br>/տասերեք հազար/               |

|     |                                                                                                                                                                                                                                                               |                                   |                                         |
|-----|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------------------|-----------------------------------------|
| -   | 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝                                                                                                                         | 22.000<br>/քսաներկու հազար/       | 20.500<br>/քսան հազար հինգ հարյուր/     |
| -   | 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝                                                                                                                         | 35.000<br>/երեսունհինգ հազար/     | 25.500<br>/քսանհինգ հազար հինգ հարյուր/ |
| -   | 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝                                                                                                                              | 70.000<br>/յոթանասուն հազար/      | 45.500<br>/քառասունհինգ հազար /         |
| 9)  | Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ մեկ քառակուսի մետրի համար՝ | 350<br>/երեք հարյուր հիսուն/      | 350<br>/երեք հարյուր հիսուն/            |
| 10) | համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝                     |                                   |                                         |
| ա.  | առևտրի օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                                      | 25.000<br>/քսանհինգ հազար/        | 25.000<br>/քսանհինգ հազար/              |
| բ.  | հանրային սննդի օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                              | 50.000<br>/հիսուն հազար/          | 50.000<br>/հիսուն հազար/                |
| գ.  | զվարճանքի օբյեկտների համար՝                                                                                                                                                                                                                                   | 100.000<br>/մեկ հարյուր հազար/    | 100.000<br>/մեկ հարյուր հազար/          |
| դ.  | բաղնիքների (սաունաների) համար՝                                                                                                                                                                                                                                | 200.000<br>/երկու հարյուր հազար/  | 200.000<br>/երկու հարյուր հազար/        |
| ե.  | խաղատների համար՝                                                                                                                                                                                                                                              | 1.000.000<br>/մեկ միլիոն/         | 1.000.000<br>/մեկ միլիոն/               |
| զ.  | շահումով խաղերի համար՝                                                                                                                                                                                                                                        | 500.000<br>/հինգ հարյուր հազար/   | 500.000<br>/հինգ հարյուր հազար/         |
| է.  | վիճակախաղերի համար՝                                                                                                                                                                                                                                           | 150.000<br>/հարյուր հիսուն հազար/ | 150.000<br>/հարյուր հիսուն հազար/       |
| 11) | համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝                                                                        |                                   |                                         |

|    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                              |                       |                       |  |
|----|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-----------------------|-----------------------|--|
